Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 31-ի N 324 - Ն որոշման

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

«ԳՈՌԱՎԱՆԻ ԱՎԱԶՈՒՏՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ

«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գոռավանի գյուղական համայնքի բնակավայրի հարավ-արևելյան մասում:

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 95.99 հեկտար (որից՝ 21.95 հեկտարը՝ դամբարանադաշտ):

«Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է կոլեկտիվ այգեգործության հողամասի հարավ-արևմտյան եզրագծի մոտով անցնող անօգտագործելի հողաշերտի վրա, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անօգտագործելի տարածքով անցնում 46.0 մ, հասնում N 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 96.0 մ, հասնում N 2 սահմանակետին, այնուհետև կրկին թեքվում է դեպի հարավ-արևելք, ուղիղ գծով անցնում 806.0 մ, հասնում N 3 սահմանակետին: N 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ուղիղ գծով անցնում 314.0 մ, հասնում N 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ուղիղ գծով անցնում 350.0 մ, հասնում N 5 սահմանակետին: N 5 սահմանակետից սահմանագիծը կորաձև թեքվում է հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևմուտք, անօգտագործելի հողատարածքով՝ N 6-9 սահմանակետերով անցնում 341.0 մ, հասնում N 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ուղիղ գծով՝ անօգտագործելի տարածքով անցնում 395.0 մ, հասնում N 11 սահմանա-

կետին: N 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ուղիղ գծով անցնում 742.0 մ, հասնում հանքավայրից դեպի հյուսիս-արևելք գտնվող N 12 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, նույն անօգտագործելի հողատարածքով անցնում 221.0 մ, հասնում սեփականաշնորհված վարելահողի եզրին գտնվող N 13 սահմանակետին: N 13 սահմանակետից սահմանագիծը վարելահողի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ապա հյուսիս, հետո՝ հյուսիս-արևմուտք, NN 14 և 15 սահմանակետերով անցնում 186.0 մ, հասնում վարելահողի եզրի N 16 սահմանակետին: N 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, սեփականաշնորհված վարելահողի հարավային եզրագծի ոլորապտույտների NN 17-32 սահմանակետերով անցնում է 637.0 մ, հասնում վարելահողի և բնակավայրի անօգտագործելի հողերի հատման կետում գտնվող N 33 սահմանակետին, այստեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անօգտագործելի տարածքի եզրագծով՝ NN 34-36 սահմանակետերով անցնում 467.0 մ, հասնում N 37 սահմանակետին: N 37 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, վարելահողի և պետարգելավայրի արանքով անցնող անօգտագործելի հողերի հարավային եզրագծի NN 38-42 սահմանակետերով անցնում է 487.0 մ, հասնում «Ա» հանգուցային սահմանակետին:

«Ա» - «Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը կազմում է 5088,0 մ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2011 թվականի
մարտի 31-ի N 324 -Ն որոշման

Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ

«ԳՈՌԱՎԱՆԻ ԱՎԱԶՈՒՏՆԵՐ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԻ

Գոռավան

Կետի հ/հ	Հեռավորությունը (մետր)
Ա	46.31
1	95.54
2	806.32
3	314.19
4	349.47
5	53.72
6	56.00
7	59.36
8	73.90
9	98.46
10	395.12
11	742.26
12	221.18
13	32.46
14	64.48
15	88.66
16	58.36
17	46.05
18	32.91
19	15.40
20	46.03
21	15.50
22	10.29
23	45.19
24	33.18
25	34.36
26	23.64
27	56.55
28	37.43
29	24.60
30	36.83
31	48.00
32	72.87
33	150.33
34	182.09
35	48.60
36	85.50
37	189.77
38	53.71
39	101.18
40	57.24
41	47.46
42	37.72
Ա	
Ընդ.	5088.22



475
417

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ